

ԿԻՆՈԹԱՏՐՈՆ

Ընկեր Թովմասյանը և ընկեր Մխիթարյանը դպրոցականներին բերել են կինոթատրոն: Որպեսզի երեխաներից և ոչ մեկը չնեղանա, ընկեր Թովմասյանը նախ այբբենական կարգով նրանց կանգնեցրեց, այնուհետև սկսեց նրանց նստեցնել. նախ առաջին շարքում ձախից աջ, հետո երկրորդ շարքում ձախից աջ և այսպես շարունակ լրացնելով n շարքից և m նստարանից կազմված դահլիճը: Հետո եկավ ընկեր Մխիթարյանը և ասաց, որ երեխաները սխալ են նստել:

Նա առաջարկեց սկզբից լրացնել առաջին նստարանները առաջին շարքից մինչև վերջինը, հետո երկրորդ նստարանները և այսպես շարունակ: Պահանջվում է որոշել, թե այս տեղափոխության ժամանակ, երեխաներից քանիսը մնացին իրենց տեղերում:

Օրինակ, եթե $n=3$ և $m=3$, ապա առաջին դեպքում երեխաները կնստեն հետևյալ կերպ.

1 2 3

4 5 6

7 8 9,

երկրորդ դեպքում՝

1 4 7

2 5 8

3 6 9

Այսպիսով երեք դպրոցականներ 1, 5 և 9-ը կմնան իրենց տեղերում:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված են n և m բնական թվերը ($1 \leq n, m \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել այն դպրոցականների քանակը, որոնք կմնան իրենց տեղերում:

Օրինակներ

№	stdin	stdout
1	3 3	3
2	2 4	2